

ՌՈՒՄԲԵՐ
ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ
ՎՐԱՅ

Վ.Ա.ԶԳԻՆ Ա.
ԵՒ ՌՈՊԵՐԹՕ ԿԻՒՂՊԵՆԿԵԱՆ
ԳԻՏՈՒԹԵԱՆ ԱՎԱԳԵՄԻԱՅԻ
ՊԱՏՈՒՈՅ ԱՆԳԱՍ

Երկուշաբթի, Յուլիս 20-ին Աղբրեջան-
ցիք ՍՈՒ 24, ՄԻԿ 25 և 1 29 երեք օրա-
նակերով ոմբակոծած են Ղարաբաղի
մայրաքաղաքը ինը ուսմբեր նետերով,
որոնք հետեւանքով հրդեհներ ծագած են:
Կրտսւի թէ (ԹՍՍ) բնակիչները խուսա-
փած են մօտենալէ հրդեհները մարելու
համար, այն վախով որ քիմիական կրնան
ըլլալ: Վիրաւորներ կան, ոչ՝ մեռելա-
յներ:

Երեքշաբթի, Յուլիս 21-ին, զնդակոծում-
ները շարունակուած են Վարդենիսի, Զոզի,
Տաուշի, Պառաւաքարի շրջանները, զրոգ-
ներով: Երեք վիրաւոր կայ: Արծուաչէնի
շրջանն ալ կրակ բացուած է կառքի մը
վրայ, որ ութ հոգի կը փոխադրէր: Երեք
հոգի տեղն ու տեղը մեռած է, մէկը՝ վի-
րաւորուած, միւս չորսն ալ՝ անհետա-
ցած: Նոյնն է Արարատեան շրջանի Երաս-
խաւանի պարագան, Սաչիկ զիւղը և
Վայք ուր երկու վիրաւորներ կան:

Մարտակերտի շրջանը հայկ. ինքնա-
պաշտպանութեան ուժերը կը շարունա-
կեն հսկել Մարտանդի ջրաբեկտարակա-
յանը, բայց ողջ Շահումեանի շրջանը
և Մարտակերտի տարածքի կէսը կը մը-
նան Աղբրեջանցիներու գրաման բանա-
կի ձեռքը:

Յուլիս 20-ին, Հայաստանի Գիտու-
թիւններու Ակադեմիայի ընդլայնուած
նիստին, նախագահը՝ ակադեմիկոս Վիկ-
տոր Համբարձումեան պատուոյ և ար-
տասահմանեան անդամի վկայագիրներ
յանձնած է Վազգէն Ա. Կաթողիկոսին
և «Կիւլպէնկեան» Հիմնադրամի զլխա-
ւոր անօրէն, արեւելագէտ Ռոպերթօ
Կիւլպէնկեանին (Փորթոկալ): Վազգէն
Ա. այս կոչումին արժանացած է հայ
ժողովուրդի պատմութեան և բանասի-
րութեան մարդին մէջ և հոգեւոր մշա-
կոյթի զարգացման ուղղութեամբ ունե-
ցած վաստակին համար, իսկ Ռ. Կիւլ-
պէնկեան՝ հայ ժողովուրդի ունեցած կա-
պերուն և հայ-փորթուկալեան յարաբե-
րութիւններուն նուիրուած իր զործե-
րուն համար:

Այս արարողութեան ներկայ եղած է
Ֆրանսայի դեսպանուհին՝ Տիկին Ֆրանս
տը Հարթէնկ:

Յաջորդ օրը, Յուլիս 21-ին, Ամենայն
Հայոց Կաթողիկոսը ընդունելութիւն մը
տուած է այս առթիւ, Հայկաչէն, ուր ևս
ներկայ եղած է տիկին տը Հարթէնկ և
Ջերմ խօսքեր արտասանած Հայոց Եկե-
ղեցոյ և ազգին հասցէին:

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ԳԱՀԻՐԻԻ մէջ, Իսրայէլի նորընտիր
վարչապետին՝ Ռապիին և Եգիպտոսի
նախագահին՝ Մուսարաքի հանդիպումը
զուրկացուցնոց որոշումներու առիթ չտը-
ւաւ, բայց վերահաստատեց կապը: Մու-
սարաք ալ ընդունեցաւ Երուսաղէմ եր-
թալու Ռապիինի հրուէրը: Քէմփ Տէյլի-
տէն 13 տարի յետոյ, այս նոր հանդի-
պումը թերեւս առիթ տայ Եգիպտոսի
«կամուրջ» մը ըլլալու Իսրայէլի և արա-

Ե
Ր
Ե
Ւ
Ն

Հ Ե Ռ Ա Տ Ի Պ

Փ
Ե
Ր
Ի
Ձ

Ե Ր Ե Ւ Ա Ն
(«ԱՐՄԷՆՓՐԷՍ» -- ՅՈՒԼԻՍ 15 / 21)

ՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ
ՆՈՐ Ա. ՏԵՂԱԿԱԼ

Նախագահական հրամանագրով Հայաս-
տանի Պաշտպանութեան նախարարի սու-
ժամեայ Ա. տեղակալ նշանակուած է Վա-
հան Ծիրիխանեան, որ կը հեռանայ յա-
տուկ ծրագրերու պետական վարչու-
թեան պետի պաշտօնէն:

ՅԱՐԱՐԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ
ՎՐԱՍՏԱՆԻ ՀԵՏ

Յուլիս 17-ին, Երեւանի մէջ Հայաստա-
նի Արտաքին նախարար՝ Բաֆֆի Յովհան-
նէսեան և վրացի իր պաշտօնակիցը՝
Չիկվածէ Երկու երկիրներու միջև զիւս-
նազիտական յարաբերութիւններ հաս-
տատելու և Արտաքին նախարարութեանց
գործակցութեան ուղղութեամբ փաստա-
թուղթեր ստորագրած են, որմէ յետոյ
տուած են մամուլի ասուլիս մը:

Նոյն օրը, Վրաստանի Արտաքին նախա-
րարը ընդունուած է վարչապետ Գագիկ
Յարութիւնեանի կողմէ: Խօսակցութեան
նիւթ եղած են Վրաստանի տարածքէն
Հայաստան հանող երկաթուղիին, կա-
ղամուղին առնչուող խնդիրներ, ինչ-
պէս նաև դեսպանատուններ բանալու
և այլ հարցեր:

ՎՐԱՑԻ ԿԱՆԱԶՆԵՐԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԻՒԼԷԱԿԱՅԱՆԻՆ
ԴԷՍ

Թիֆլիս լոյս տեսնող «Սաքարթվելոս
Ռեսպուբլիքա» թերթի Յուլիսի թիւին
մէջ լոյս տեսած է «Կը կրկնուի», արդեօք,

բախան երկիրներու փոխհասկացողու-
թեան համար:

ՓԱԼԵՐՄՈՅԻ մէջ շատ լարուած մըթ-
նոլորտ մը տիրած է դատաւոր Պորսելլե-
նոյի 5 թիկնապահներուն յուզարկաւո-
րութեան ընթացքին և արարողութեան
աւարտին կարելի իսկ չէ եղած առաջին
առնել միջազէպերու Հանրապետութեան
նախագահին եկեղեցիէն դուրս ելլելու
պահուն և հազիւ կարելի եղած է զինքը
հեռացնել հրմշտուքներէն: Ամբողջ բազ-
մութիւնը ցուցարարի վերածուած՝ «խեղ-
կատակներ, դուրս մարդասպաններ» կը
պոռար: Ամբողջ Իտալիոյ մէջ ալ տասը
վայրկեանի գործադուլ եղած է ամէն
տեղ, իբրև խորհրդանշական բողոք:
Փալերմոյի քաղաքապետն ալ ևս ութ ու-
րիշ պաշտօնատարներ հրաժարած են:
Բուն և միակ ամբաստանեալը՝ Պետու-
թիւնն է: Դատաւորին յուզարկաւորու-
թիւնը պիտի կատարուի քանի մը օրէն,
բոլորովին անպաշտօն կերպով, ընտա-
նիքը մերժած էր սոյլ յուզարկաւորու-
թիւն: Ֆրանսան ալ սկսած է մտահոգ-
ուել, որովհետև վերջին տարիներուն
մաֆիան «կ'արտապաղթէ» ալ ևս առա-
ջին առթիւ Գոթի աՎգիւրը արդէն կարե-
ւոր յենարան մըն է Մարսէլէն Մոնաքօ

Չերնորիլը Վրաստանի մէջ» յօդուածը,
Վրաստանի Պետական Խորհուրդի բնա-
պահութեան յանձնաժողովի փոխ -- նա-
խագահ Կիա Գաչեչիլաձէի ստորագրու-
թեամբ: Հոն յօդուածագիրը կ'ակնարկէ
Հայաստանի հիւլէակայանի վերաբեր-
օգտագործման յարուցանած վտանգնե-
րուն, որոնք կը սպառնան ամբողջ շրջա-
նին, նաև Վրաստանին: Գաչեչիլաձէ կը
նշէ թէ կայանը կը գտնուի սիւմիք փա-
փուկ դօսիի մը վրայ և թէ ան զերծ չէ
արկածի սպառնալիքէ, քանի որ յօդ-
ուածագիրը կը պնդէ թէ 1982-ին արդէն
ձեղք մը բացուած էր անոր առաջին ևն-
թարածանմունքին մէջ: Վրացի մասնա-
գէտը կոչ կ'ընէ ամէն ձեւով արգելք ըլ-
լալ անոր վերաբացման, յիշելով սակայն
զայն վերաբեր ոգտագործելու ստիպող
զրդապատճառները:

ԶՈՀԵՐՈՒ ԸՆՏԱՆԻՔՆԵՐՈՒՆ

Բարեսիրական նպատակներով Գորիս
գտնուող Էֆաթաւէն Ռաֆայէլ Սարգս-
եան բուժման դասընթացքներ կազմակեր-
պած է Գորիսցիներու համար, որմէ հա-
ւաքուած դուժարը տրամադրուած է
սահմանամերձ շրջանը զոհ գացած մար-
տիկներու ընտանիքներուն:

ՄԵԾՆ -- ԲՐԻՏԱՆԻՈՅ ԴԵՍՊԱՆԸ
ՆԱԽԱԳԱՀԻՆ ՄՕՏ

Յուլիս 14-ին Լեւոն Տէր -- Պետրոսեան
ընդունած է Մեծն -- Բրիտանիոյ Ռուսա-
տանի դեսպան՝ Սըր Պրայան Ֆոլին, որ
այսուհետեւ իր երկիրը կը ներկայացնէ
նաև Հայաստանի մէջ: Տեսակցութեան
նիւթ եղած են երկու երկիրներու յարա-

(Շար. ը Դ. Ե)

ուր «ադտտա զրամը» կը հոսի, կարու-
ծի զործերու և քաղինօներու մէջ:

ԹՈՒՐԻՒՅԻ Հարաւ - արեւելեան ծայ-
րամասին՝ Հաքեարիի Իրաքի սահմանա-
կից մէկ գաւառակին մէջ Յուլիս 20-ին
իրաքեան հողատարածքէն կրակ բաց
ուած է ստիկանատան մը վրայ. բա-
խումներու ընթացքին տասը թուրք ոս-
տիկաններ սպաննուած են:

ՍԵՐԺ ՔԼԱՐՍՏԵԼԸՏ, հրեայ փաստա-
բանը որ 40 տարի է աշխարհի ամէն կու-
մը կը հետապնդէ նացիները, որոնք պս-
տասխանատուութիւններ ունեցած է
հրեաներու ողջակիզումին մէջ, յայտար-
րեց թէ Հանրապետութեան նախագ-
հը այլևս ծագկեպսակ դեմը պիտի չ
տայ իր կողմէ մտուշալ Փէթլէնի շիր-
մին, Նոյ. 11-ին ինչպէս աւանդութի
էր, հաստատուած տը Կոլի կողմէ, յս-
գելու համար Վէրտէօնի յաղթական
յիշատակը: «Փէթլէն - Վէրտէօն» ազ-
միութիւնը պայթակղած է և կոչ կ'ը
Միթերանի ընթացք չտալ փոքրամ-
նութեան մը, որ կը շարունակէ զրդ
ժողովուրդը: Ժորժ Սառ, փոխազլ
թեանց նախարարը Ռատիօ - Շալո
յայտարարեց թէ անվերապահօրէն
մամիտ է այս որոշումին: